Նոր Ջուղայի Ձեռագրերը եւ Հնատիպ գրքերը

Վերգինէ Միրզախանեան
Նոր Ջուղայի հայոց ազգային կրթահամալիր գրադարանի գրադարանավար

Գրչութեան արուեստը հայերիս մօտ, սկիզբ է առել մեր գրականութեան սկզբնաւորութիւնից՝5-րդ դարի սկզբներից, երբ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով յօրինուեց հայերէն Այբուբենը եւ մենք եւս դասուեցինք աշխարհի այն ազգերի շարքում, որոնք վաղուց արդէն ունէին իրենց գրականութիւնն ու մշակոյթի այդ ճիւղը: Դա իր ժամանակին համարուել է կարեւոր մի աշխատանք ու յիշատակութեան արժանի մի վերելք:

Ինչպէս որ պատմահայր Մովսէս Խորենացին է ասում.

«Մենք թէեւ համեմատած որոշ ազգերի ուշ կարողացանք ունենալ մեր սեփական գիրն ու գրականութիւնը, բայց այդուհանդերձ, դարձեալ շատ առաջ էինք աշխարհի մեծ թւով ազգերից, որոնք թէ քանակով եւ թէ իրենց ուժով, շատ աւելին էին մեզանից»:

17-րդ դարի սկզբներին, երբ Իրանը պատերազմի մէջ էր գտնւում Թուրքիայի հետ, Շահ Աբբասը հին Ջուղայից հայերին գաղթեցրեց Իրան, հիմք դնելով Նոր Ջուղան:

Առ այդ Նոր Ջուղան ունի աւելի քան 4-դարեայ պատմական հարուստ անցեալ՝ազգային, կրթական, մշակութային, առեւտրական եւ այլ բնագաւառների մէջ:

17-րդ դարը Նոր Ջուղայի գոյութեան ընթացքում, ինչպէս 5-րդ դարը հայոց պատմութեան եւ մշակոյթի մէջ, համարւում է Նոր Ջուղայի ոսկեդարը, երբ հակառակ նոր հիմնւած եւ գաղթական լինելու հանգամանքին, սկսում է զարգանալ ոչ միայն վաճառականութիւնն ու առեւտուրը, այլ նաեւ սկսում է ծաղկել ու նոր փայլ ստանալ գրչագրութիւնը եւ շնորհիւ Խաչատուր Վրդ. Կեսարացու, տպագրութիւնը, որը առաջինն էր ոչ միայն Իրանում այլ նաեւ միջին արեւելքում:

Ինչպէս հայկական միւս վանքերը, այնպէս էլ Նոր Ջուղայի Ս.Ամենափրկչեան Վանքը իր հիմնադրման օրից հաւաքել ու պահել է հայերէն գրչագրեր, որոնք այսօր մաս են կազմում հայ ժողովրդի ունեցած շուրջ 25.000 ձեռագիր գանձերի: Նոր Ջուղան որպէս սփիւռքի հայաշատ հին գաղութ անւանւել է **«Արտասահմանեան Հայաստան»** եւ իր հայկականութեամբ մինչեւ այսօր ել պահել է այդ կոչումը:

Ս. Ա. Վանքը որպէս միաբանական կենտրոն, միաժամանակ եղել է հայ մշակոյթին ու դպրութեանը ծառայող հաստատութիւն, թէ առաջին տպարանի հաստատումից առաջ, Խաչատուր Կեսարացու առաջնորդութեան օրօք եւ թէ նրանից յետոյ, 17-րդ դարի երկրորդ կէսին եւ 18-19-րդ դարերում:Վանքի միաբան հայրերն ու հոգեւորականները թէ վանքից ներս եւ թէ վանքից դուրս, Նոր Ջուղայի եկեղեցիների մութ ու խոնաւ սենեակներում, մոմի եւ ձէթի պլպլան լոյսի ներքոյ, գրել ու ընդօրինակել են բազմաթիւ գրքեր, որոնք այսօր ցրւած են աշխարհի զանազան կողմերում ու թանգարան-մատենադարաններում:Բացի տեղում գրւած ձեռագրերից, Ս. Ա. Վանքի թանգարանում պահւում են գաղթական ժողովրդի հետ բերւած, ինչպէս նաեւ Ջուղայի հայ վաճառականների բարեգործութեամբ ու մեկենասութեամբ հրատարակւած բազմաթիւ գրքեր:

1905-06 թւականներին, Թադէոս Յովհաննեանի ծախսով, նրա հօր՝Ն. Ջ. պատմագիր Յարութիւն Տէր Յովհաննեանի յիշատակին, Վանքի մայր տաճարի դիմաց, գրադարան-մատենադարանի համար կառուցել է մի առանձին շէնք:

«Ս. Ներսէս Շնորհալի» Գրադարան-Մատենադարանը ներկայիս ունի շուրջ 25.000 հայերէն եւ օտար լեզու գրքեր: Հայերէն գրքերի թիւը հասնում է 17.000-ի, որոնցից անվճար օգտւում են համայնքի ժողովուրդն ու աշակերտութիւնը, ինչպէս նաեւ պարսիկ ուսանողներն ու հետազօտողները:

Հայերէն գրչագրերի մի համեստ հաւաքածոյ ունի Նոր Ջուղայի Ս.Ամենափրկչեան Վանքը՝շուրջ 750 հատոր, որոնք պահւում են «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան-մատենադարանում, որի մի մասը՝44 գրչագիր, թղթեայ եւ մագաղաթեայ, ցուցադրւած են Վանքի թանգարանում, երկու առանձին ցուցափեղկերի մէջ:

Այս ցուցափեղկերից մէկի գրչագրերը գրւել են Արեւմտեան Հայաստանում 10-16-րդ դարերում, իսկ միւսինը՝ Նոր Ջուղայում, սկսեալ 17-րդ դարի սկզբներից՝ 1607 թւից:

Գրչագրերի առթիւ լոյս է տեսել երկու հատորով ցուցակներ, դրանցից առաջինը կազմւել է 1902 թ.-ին, Սմբատ Վարդանի Տէր Աւետիսեանի կողմից, իսկ երկրորդ հատորը, որը լրացնում է առաջին հատորի, գրւել է Պրն. Լեւոն Մինասեանի միջոցով:

Սբ. Ա. Վանքի թանգարանում գոյութիւն ունեն ձեռագիր գրքեր, որոնք ըստ ժամանակագրական կարգի պատկանում են 9-19-րդ դարերին եւ պարունակում են հետեւեալ բովանդակութիւնը՝

- Մասունք հին կտակարանի

- Աւետարան

- Ճաշոց

- Ճառընտիր

- Հայսմաւուրք

- Ժամագիրք, տօնացոյց

- Շարակնոց

- Գանձարան

- Խորհրտատետր

- Մաշտոց

- Մեկնութիւն սուրբ գրոց

- Հայրագրութիւն

- Ժողովածու , որը պարունակում է՝

- Տարբեր բնոյթի ժողովածուներ
- Ոսկեփորիկներ
- Պատմագրական երկեր
- Բժշկարաններ
- Այլն

Ս. Ամենափրկչեան Վանքի թանգարանում ձեռագրերից բացի կան նաեւ 5 Հնատիպ գրքեր:

- Պատարագատետր: Յակոբ Մեղապարտ, 1513 թ., Վենետիկում

- Հարանց վարք: Խաչատուր Կեսարացի, 1641 թ., Նոր Ջուղա

- Աստուածաշունչ: Ոսկան Երեւանցի, 1666 թ., Ամստերդամ

- Ազդարար: Յարութիւն Քահանայ Շմաւոնեանի, 1794 թ., Մադրաս

- Ժամագիրք: Խաչատուր Կեսարացի, 1642 թ., Նոր Ջուղա

Ս. Ա. Վանքի գրադարան-մատենադարանից բացի, Նոր Ջուղայում գոյութիւն ունեն հետեւեալ գրադարանները՝

- Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան գրադարանը, որը հիմնուել է 1973 թ.-ին եւ պարունակում է աւելի քան 3.000 գրքեր:

- Ն. Ջ. Հայոց Ազգ. Կրթահամլիրի գրադարանը, որը կառուցուել է 2009 թւականին, միատեղելով «Արմէն» տարրական, «Քանանեան» օրիորդաց ուղեցոյց եւ միջնակարգ եւ «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների գրադարանները: Կրթահամալիրի գրադարանից օգտուում են դպրոցի աշակերտութիւնը, ուսուցչական կազմերը, ծնողները եւ շրջանաւարտ աշակերտները: Գրադարանում տեղադրուած է աւելի քան 6000 հատոր գիրք, պարսկերէն, անգլերէն եւ հայերէն լեզուներով:

Հայերէն գրքերի բովանդակութիւնն ըստ հետեւեալի է՝

- Կրօնական

- Գիտական

- Բառարաններ

- Հանրագիտարաններ

- Վէպեր, պատմուածքներ եւ հեքիաթներ

- Բանաստեղծութիւններ

- Արուեստ (Երգ¬երաժշտութիւն, թատերական եւայլը)

- Մանկական գրականութիւն

եւ այլը:

Հարկ եմ համարում նշել, «Քանանեան» աղջկայոց դպրոցում պահպանւում է մի պատկառելի հաւաքածոյ 1846-1946 թւականներին տպագրուած գրքերից, որոնք պահպանւում են ծայրայեղ ուշադրութեամբ: Ժամանակին այս հաւաքածոյի ցուցակները տարուել են Երեւանի Մատենադարան:

Տպագրութիւնը Նոր Ջուղայում

Ներկայ դարում տպագրական գիւտի եւ տպագիր գրքերի արդիւնքում, գրչութիւնը գրեթէ տեղի է տուել եւ գրչագրութիւնն դարձել է հազւադէպ:

Հայկական տպարանների հիմնադման 7-րդ տեղը պատկանում է Նոր Ջուղային:

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանքը սկսեալ 1636-37 թւականներից ունեցել է նաեւ տպարան, շնորհիւ Առաջնորդ՝ Խաչատուր Վարդապետ Կեսարացու ջանքերի, որտեղ 1638 թւին լոյս է տեսել Իրանահայ առաջին տպագիր գիրքը «Սաղմոս ի Դաւիթ» խորագրով:

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանքի տպարանումª 335 տարիների ընթացքում, լոյս են տեսել 372 հատոր գիրք ու գրքոյկներ:

Նոր Ջուղայի Ս.Ամենափրկչեան Վանքի տպարանը հայ ժողովրդի լուսատենչ ձգտումի պերճախօս վկայութիւններից մէկն է եւ հանդիսանում է բովանդակ Իրանի եւ միջին Արեւելքի առաջին տպարանը, եւ իր իւրայատուկ տեղն ունի տարածաշրջանի զարգացման ու վերելքի մէջ:

Եւ այժմ վանքի տպարանը շարունակում է իր տպագրութեան աշխատանքը, գրքերի, թերթերի եւ այլ տարբերակների տպագրումով:

Նոր Ջուղայի գրքերի թայնացման ծրագիր

Այսօր, գտնուելով տեխնիկական զարգացման փուլում, հնարաւոր է փոշոտ եւ խունացած գրքերին կեանք հաղորդել թայնացման միջոցով, սկսեալ ձեռագիր եւ հնատիպ գրքերից, որոնք այսօր խիստ պահպանման խնդիր ունեն եւ այդ գրքերին ձեռնահասութիւնը դժւարին մի հարց է, որի լուծման լաւագոյն միջոցը սոյն գրքերի պատճենահանումն ու էլեկտրոնային էջերի վերածելն է, որից յետոյ դրանք առաւել հանրային բնոյթ են ստանալու:

Էլեկտրոնային գրքերը հեշտացնում են իւրաքանչիւր ընթերողի գործը եւ փաստը ցոյց է տուել, որ այս տարբերակը օգնում է ընթերցանութեան մակարդակի բարձրացմանը:

Սովորաբար իւրաքանչիւր գրքի ձեռնահասութիւն ունենալու համար պիտի շրջել գրադարաններում, փնտրել գրապահոցներում, մինչդեռ ցանկացած էլեկտրոնային տարբերակ, հեշտացնում է ցանկացած գրքի փնտռտուքը:

Այս ամենից յետոյ անհրաժեշտ է նշել, որ Նոր Ջուղայում եւս ապագայի ծրագրերում է մասնագէտների միջոցով թւայնացնել ունեցած գրչագրերի եւ հնատիպ գրքերի հաւաքածոն, ինչպէս նաեւ գրադարանների գրքերը եւ դրանք տեղադրել Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդարանի կայքէջում: